

V—XVII դդ. ՀԱՅ-ԻՍՊԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Գ. ԱՐԱՄՅԱՆ

Մեծ և բազմազան են հայ մշակույթի միջազգային կապերը աշխարհի ժողովուրդների մշակույթների հետ: Հայաստանն իր պատմական ճանապարհի վրա հաղորդակցվել և փոխառնչվել է բազմաթիվ երկրների ու ժողովուրդների հետ: Հայաստանի և իսպանիայի փոխառնչությունների արմատները թաղված են երկու ժողովուրդների պատմական անցյալի խորքերում: Դարերի ընթացքում դրանք կամ ամրապնդվել, կամ թուլացել են, և այդ ամենը ունեցել է պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնաէթնիկական և նման լուրջ պատճառներ:

Իսպանացիները հայերին հայտնի են եղել տակավին հնագույն ժամանակներում: Նրանց մասին առաջին հիշատակությունը գտնում ենք Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Ի՞նչ է հաղորդում Խորենացին իսպանիայի մասին: Նկարագրելով մ. թ. ա. III դ. իրողությունները, պատմիչը նշում է. «Նա (Արշակ Մեծը—Ա. Ա.) լսում է, որ հռոմայեցիները զորացել են (և իշխում են) բոլոր Արևմուտքին ու ծովին, որ սպանիացիներից խլել են ոսկու և արծաթի հանքերը... (Ուստի Արշակը) պատգամավորներ ուղարկելով, խնդրում է դաշնակցություն»: Խորենացու հաղորդած փաստերն արժանահավատ են: Հայտնի է, որ արդեն հեռավոր անցյալում Պիրենեյան թերակղզին հռչակվել էր իր ընդերքի հարստությամբ, և հռոմեացիների բազմաթիվ արշավանքները նպատակ ունեին ձեռք բերել այդ բազմահարուստ հանքատեղիները: Իսպանիայի ցեղերը բազմիցս ապստամբել են հռոմեացիների դեմ. այդպիսի մի ապստամբության մասին հռոմեացի զորավար Տիրերիուսը նամակով հաղորդել է Նոնատիայի Աբգար թագավորին¹:

Անանիա Շիրակացու «Աշխարհագրութեան» մեջ տրված է իսպանիայի առաջին նկարագրությունը. «Եվրոպայի առաջին բնաշխարհը Սպանիան է, որը կարծես թե եռանկյունի ձև ունի և մտնում է ծովի մեջ՝ ինչպես կղզի: Արևմուտքից (և հյուսիսից) սահմանակից է օվկիանոսին... Արևելքից սահմանակից է նույնպես Պյուռնյան լեռներին, իսկ հարավից՝ Հունական ծովին»²: Այնուհետև տրվում է երկրի ֆիզիկա-աշխարհագրական բնութագիրը, հիշվում են Դուբազ (Դուբրո) և Վիոխոս (Իբերուս, Էբրո) գետերը: Նշվում է երկրի բաժանումը երեք գավառների, որոնց մեջ կան «քաղաքներ բազում»: Անանիա Շիրակացու պատմական երկերից մեկում իսպանիան հիշատակվում է այն երկրների շարքում, որոնք ունեն գիր և գրականություն³:

Հայ-իսպանական պետական-քաղաքական, տնտեսական ու կրոնական առնչություններն աշխուժանում են Կիլիկյան հայկական պետության ստեղծումից հետո: Կիլիկիայի տարածքով էին անցնում խաչակիրները, որոնց մեջ կային նաև իսպանացիներ: Բացի այդ, իսպանիան երկուստեք շահավետ առևտրական կապերի մեջ էր Կիլիկյան պետության հետ, որի նավահանգիստները կարևոր նշանակություն ունեին միջազգային առևտրի համար⁴: 1293 թ., Արագոնի թագավորի խնդրանքով, ինչպես ենթադրում է Ղ. Ալիշանը, կա-

1 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 148:

2 Նույն տեղում, էջ 188:

3 Անանիա Շիրակացի, Երևան, 1979, էջ 270:

4 Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 360:

5 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 359:

տալոնների վաճառականներին արտոնություններ տրվեցին, որոնցից մինչ այդ օգտվում էին միայն վենետիկցիներն ու ճենովացիները. դա նպաստեց երկու երեքների շփման ոլորտների լայնացմանն ու ամրապնդմանը⁶։ Ըստ Վ. Հելդի, Կատալոնիայում, որի վաճառականները հաճախ մեկնում էին Կիլիկիա, կազմվել է «Մովալին օրենք»⁷։ Արագոնի թագավոր Հակոբ II-ի և Կիլիկիայի Օշին թագավորի բարեկամական և դիվանագիտական հարաբերությունների մասին վկայում են Հակոբ II-ի նամակները (1319 թ.), որտեղ նա հիշատակել է Օշինին նվեր ուղարկած նոսրագների ու թանկարժեք զարդերի մասին, իսկ Օշինը Հակոբ II-ի խնդրանքով Տերբակոնի (Տառագոնա) տաճարի համար ուղարկել է սուրբ Թեկղի (Թեկլա) նշխարները, որոնք հանդիսավորությամբ տեղադրվել են քաղաքի տաճարում⁸։ Երկու երկրների կրոնական-պաշտամունքային հարաբերությունների մասին է վկայում նաև Տուրքոյի հնադույն տաճարում XIII դ. ստեղծված որմնանկարը, որը պատկերում է հայ հոգեվորականների երթը։

Կիլիկյան Հայաստանում, ըստ երևույթին, ապրել են նաև իսպանացիներ։ Նրանցից մեկին՝ Պետրոս Հովհան քահանա Սպանիացուն, որը մասնակցել է 1274 թ. ճենովացիների հետ դիվանագիտական բանակցություններին, հիշատակում է Ղ. Ալիշանը, նշելով, որ նա «բնակ էր տեղվույն և ոչ անցորդ պատահական»⁹։ XIII դ. իսպանացիները թափանցեցին Կիլիկյան Հայաստան, իբրև Ֆրանցիսկյան միաբանության անդամներ. իսպանացի այդ քարոզիչներից ոմանք տիրապետեցին հայերենին և զբաղվեցին հայկական աղբյուրների ուսումնասիրությամբ ու թարգմանություններով¹⁰։ Ֆրանցիսկյան միաբանության միսիոներ Գիլյոմ դը Ռուբրուկի ուղեգրության մեջ հիշատակվում է «ծագումով կատալոնցի հայր Բեռնարդը՝ քարոզիչ-եղբայրների միաբանությունից», որի հետ Ռուբրուկը հանդիպել է 1255 թ. Նախիջևանում¹¹։ Որ հայր Բեռնարդը միակ իսպանացին չէր, որ հայտնվել էր հայրենիքից այդքան հեռու, վկայում է նաև միջնադարյան աշխարհագրության կարևորագույն աղբյուրներից մեկը, իսպաներեն կազմված, այսպես կոչված, «Կատալոնյան քարտեզը» (1375 թ.), որտեղ հիշատակված է «հայ եղբայրների մենաստանը իսսիկ-Վուլ լճի վրա»¹²։ Այն փաստորեն իսպանական աղբյուր է՝ մոնղոլական տիրապետության շրջանում հայերի միսիոներական գործունեության վերաբերյալ։ Այս ժամանակաշրջանում ապրած մեծանուն տաղերգու Ֆրիկը իր նշանավոր «Գանգատի» մեջ թվարկում է իրեն հայտնի բոլոր ցեղերը, ի թիվս որոնց նաև իսպանացիներին։

Մինն է Դաղմատ Սպանիացի,
Ծընունդ սրբոյ աւագանի.
Հաւատացեալ հայր և յորդի
Ի երկրպագու քո սուրբ խաչի¹³։

Կիլիկյան Հայաստանին է նվիրված կաստիլյան թագավոր Ալֆոնս X Իմաստունի (1221—1284 թթ.) «Երգեր սուրբ Մարիամի» երկում մի ոչ մեծ սյուժե. 115-րդ երգը պատմում է այն դժվարությունների մասին, որ մի երի-

6 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 458։

7 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 392.

8 Բանասեր, Փարիզ, 1905, № 3, էջ 65—74։

9 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 363։

10 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 2, Պոլիս, 1912, էջ 1714—1715։

11 Гильом де Рубрук, Путешествие в восточные страны (Путешествие в восточные страны Плано Карпини и Рубрука, М., 1957, с. 189—190).

12 В. В. Бартольд, Сочинения, т. XI, М., 1977, с. 278.

13 Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 233։

տասարդ կրել է Հայաստանում: Նա ուղևորվում է դեպի Սև լեռը, այն ճգնաժամի մոտ, որը պիտի փրկեր նրան սատանայից¹⁴:

Իսպանիայի հետ է կապված Կիլիկյան Հայաստանի վերջին թագավորի՝ Լևոն VI Լուսինյանի ճակատագիրը, որը 1375 թ. գերի է տարվում եգիպտական սուլթանի կողմից: Հայ թագավորը յոթ տարի բանտարկված է մնում Կահիրեում, որտեղից աղատվում է իր խոստովանահոր՝ Ֆրանցիսկյան միաբանության անդամ հայր Դարդելի շնորհիվ, որն այդ գործի մեջ է ներքաշում նաև Հռոմի պապին, ինչպես և՛ Կաստիլիայի և Արագոնի թագավորներին: 1382 թ. աշնանը վերջապես հաջողվում է աղատել հայ թագավորին: Դրանից հետո Լևոն VI-ը Ավինյոնում այցելում է պապին, ապա մեկնում Իսպանիա՝ շնորհակալություն հայտնելու իր մյուս փրկարարներին՝ Կաստիլիայի թագավոր Խուան I-ին և Արագոնի թագավոր Պեդրո IV-ին: Կաստիլիայի Խուան I արքան հայ թագավորին շնորհ է անում մինչև կյանքի վերջը տնօրինել երեք քաղաքներին՝ Մադրիդ, Վիլլարեալ, Անդուխար:

Միջին դարերում Իսպանիա են մեկնում բազմաթիվ հայ ուխտավորներ՝ այցելելու Դալիցիայի Սանտյագո դե Կոմպոստելա վանքը, որտեղ պահպանվում էին ս. Հակոբի (Յաղո) նշխարները: Պիրենեյան թերակղզում քրիստոնեության տարածումը երկար ժամանակ կապված է եղել Հակոբ առաքյալի (Սանտյագո) անվանը: Սակայն նորագույն հետազոտությունները վկայում են, որ Հակոբի պաշտամունքը Իսպանիայում ծագել է VII դ. առաջին կեսին: Թեև Կոմպոստելայի ժամանակ (VIII—XV դդ.) Իսպանիայում առանձնահատուկ հետաքրքրություն է նկատվում այդ սրբի հանդեպ. «Սանտյագո անվամբ բազում քաղաքները, միջնադարյան ասպետական միաբանությունը, իսպանացի ասպետների ռազմականը, քրիստոնեական զինվորության առջև Հակոբի հայտնությունը վկայում են առաքյալի և նրա պաշտամունքի ժողովրդականության մասին»¹⁵: Իսպանիայի սահմաններից դուրս այս որբի յուրահատուկ պաշտամունքի մասին գրել է Դանտեն «Նոր կյանքում». «...ուխտավոր է համարվում լուկ նա, ով գնում է դեպի ս. Հակոբի տունը կամ վերադառնում է այնտեղից»¹⁶: Միջին դարերում ս. Հակոբի գերեզմանը Սանտյագո-դե-Կոմպոստելայում, ինչպես և Երուսաղեմի ս. Հակոբյանց հայկական վանքը եղել են ուխտագնացության նշանավոր կենտրոններ: Ինչպես հայտնի է, «Տվորեն-տացիք սովորություն ունեին սկզբում ուխտի գնալ Երուսաղեմ, ապա ս. Հակոբի գերեզմանը»¹⁷:

Ս. առաքյալ Հակոբի մասին ավանդությունը վերաբերում է հայկական հնագույն պարականոններին: «Հարանց վարքերում» Ավգերյանը բերում է նաև ս. Հակոբի մասին մի ավանդություն, որը տարածված է եղել Իսպանիայում հնագույն ժամանակներից¹⁸: Հստ ավանդության XIII դ. սկզբներին Իսպանիա է մեկնում Հովհաննես վարդապետը, որը հայերեն է թարգմանում ս. Հակոբ առաքյալի վկայաբանությունը, իսկ XVI դ. որպես իսպանական թագավորի պատվիրակ հայերին է ներկայանում Մուրսիայի եպիսկոպոսի որդի Բաբեքուն, որը իսպաներեն է թարգմանում ս. Հակոբի մասին պարականոնի հայկական տարբերակը¹⁹:

Հայերը Կոմպոստելայում ունեին իրենց հանգրվանը, որ կոչվում էր «Երուսաղեմ»: Այնտեղ կային հայերեն գրքեր, կատարվում էր հայերեն

14 Թ. Վ. Կյուլլպենկյան, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, 1986, էջ 22:

15 Ю. Б. Циркин, Распространение христианства в Испании до Миланского эдикта («Иберия». Культура народов Пиренейского полуострова, Л., 1983, с. 23).

16 Данте Алигьери, Новая жизнь. Божественная комедия, М., 1967, с. 72.

17 Նույն տեղում, էջ 544:

18 Մ. Ավգերեն, Իրական պարբ. և վկայաբանություն սրբոց, որք կան ի հին Տոնացոյցի եկեղեցւոյ Հայաստանեայց, հ. Ժ, Վենետիկ, 1894, էջ 303—304:

19 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 457:

ժամերգություն: Սակայն տեղի հայկական ձեռագրերը չեն պահպանվել²⁰։ Պահպանվել են որոշ ուղեգրություններ, որ հեղինակել են Իսպանիա ուղևորված հայ ուխտավորները, որոնց մեջ առաջինը Մարտիրոս Երզնկացին է։ 1489 թ. հոկտեմբերի 29-ին նա դուրս է եկել Երզնկայից։ Եղել է Կոստանդնուպոլսում, Վենետիկում, Հռոմում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆլանդրիայում, Ֆրանսիայում։ Նա համակված է եղել ջերմեռանդ հավատացյալի բուն տենչանքով՝ տեսնել և երկրպագել տարբեր երկրներում գտնվող սրբոց նշխարները։ Նրա ամենամիտրական ցանկություններից մեկն էլ եղել է այցելել ս. Հակոբի գերեզմանը. «...Ի վաղուց հետ է փափաքէի սուրբ գլխաւոր Առաքելոց գերեզմանին և սուրբ Յակոբայ գերեզմանին տեսանելոյ»։ Իսկ երբ նա տեսնում է ս. Հակոբի գերեզմանը, խորին գոհունակության զգացումով բացականչում է. «Բազում արտասուօք զփափաք սրտիս կատարեցի»²¹։ Մարտիրոսը մանրամասն նկարագրում է ս. Հակոբի վանքը։ Նրան ապշեցնում են կառույցի գեղեցիկ հորինվածքը, ներքին հարդարանքը, շատրվանները. «Եւ զայլ ամբօ վայելչութիւնն ո՞վ կարէ պատմեր»²²։ Մարտիրոսը երկար ճանապարհորդում է Իսպանիայում՝ հյուսիսից հարավ, ապա ծովով մինչև Կադիքս և դարձյալ ոտքով հարավից արևելք։ Իսպանիային վերաբերող մասը Երզնկացու ուղեգրության մոտ կեսն է կազմում։ Գրված է ավելի մանրամասն, ուշագրավ են զուտ մարդկային հարաբերությունները։ Մարտիրոսը բազմիցս նշում է իսպանացիների սրտակցությունն ու ջերմությունը։ Նա շփվում է թե՛ բնակիչների և թե՛ նավապետի ու նավաստիների հետ։ Նրա բառապաշարի մեջ է մտել «բսպիտալ» բառը (Սան-Սեբաստյանում «բսպիտալին տէրն այրի և կինն խիստ անշափ սէր արարին»)։ Դա «hospital» բառն է, որն այժմ միջազգային նշանակություն է ձեռք բերել, մինչդեռ Երզնկացու ժամանակ շուրջ այդ նշանակությունը (հմտ. լատիներեն hospitium—օտարներին հյուրընկալող տներ, հյուրանոցատիպ՝ վանական հաստատություններ և իսպաներեն hospitalario—հյուրընկալ, հյուրընկալություն—hospitalidad)*։ Բիսկայայում Մարտիրոսը հանդիպում է ծով դուրս գալու պատրաստ մի նավի և համոզում է նավապետին վերցնել իրեն։ 67 օր ճեղքում են Ատլանտիկայի ջրերը, սակայն նավի վնասվածքի պատճառով խառիսխ են գցում մի նավահանգստում (ըստ Սեն-Մարտենի, այդ խիստ գեղեցիկ, փոքրիկ և բարով լի» քաղաքը Կադիքսն է), որտեղից էլ նա ոտքով շարունակում է իր ճամփորդությունը։ Սկիզբից նրան ընդունում է Իզաբել Թագուհին, այնուհետև նա անցնում է Գրանադա՝ «չաշխարհն Մադրիդացոց», Բարսելոն, Վալենսիա։ Երզնկացուն բնորոշ են շափազանցումները. նրա տվյալներով Բարսելոնում կար 90000, Վալենսիայում՝ 70000 տուն։

Մեկ այլ ուխտավոր՝ Հովհաննես վարդապետը (XVI դ. կեսեր), երկու անգամ եղել է Սանտյագո դե Կոմպոստելայում, որի մասին վկայում է նրա հիշատակարանը XV դ. մի Ավետարանում։ Այս Ավետարանը արժեքավոր է նաև այնու, որ նրա մեջ կատարվել է լատիներեն, հունարեն և իսպաներեն մի հիշատակագրություն²⁴։

Սակայն հայ ուխտավորներից ոչ մեկը Իսպանիայի նկարագրության խնդրում չի կարող համեմատվել Մարդիս արեղայի հետ. այս միանգամայն ճիշտ կարծիքին է Լ. Խաչիկյանը, որը հրապարակել և մանրամասն ծանո-

20 Ռ. Վ. Կյուլպենկյան, *նշվ. աշխ.*, էջ 38։

21 Վ. Հակոբյան, Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը (ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., 1957, № 6, էջ 103)։

22 Նույն տեղում, էջ 108։

23 Նույն տեղում, էջ 107։

* Ա. Մարուխանի կարծիքով միակ եվրոպական լեզուն, որին տիրապետել է Մարտիրոսը, եղել է իտալերենը (տե՛ս Ա. Մարուխան, Բիզիա և հայերը, Վիեննա, 1937, էջ 248)։

24 Ռ. Վ. Կյուլպենկյան, *նշվ. աշխ.*, էջ 275։

թագրել է նրա ուղեգրությունը²⁵։ Սարգիս արեղան սկսել է իր ճամփորդությունը 1587 թ., ըստ երևույթին Երզնկայից, հասել է մինչև Կոստանդնուպոլիս, եղել է Վենետիկում, Հոռոմում, շրջագայել Գերմանիայում, Ֆլանդրիայում, Անգլիայում, Ֆրանսիայում։ Ուշագրավ է, որ այդ բոլոր երկրներում նա հասցրել է սովորել նրանց լեզուները։ Հասնելով Իսպանիա, որը անվանում է «սուրբ Յակոբայ աշխարհ», նա տիրապետում է նաև իսպաներենին՝ ռեզու չէի գիտել, շարժարանք քաշեցի մինչև ռուսյա²⁶։ Եվ սկսվում է նրա փառավոր շրջագայությունը սրբավայրերում։ Դրանցից յուրաքանչյուրի մասին պատմելիս նա նկարագրում է շքեղաշուք եկեղեցիները, վանքերը, նշում առավել ուշագրավ տեղերը՝ կապված սրբերի վարքի զանազան ավանդությունների հետ և այլն։ Մանրամասն թվարկում է եկեղեցիների, մենաստանների, զանգակատների, սուրբ նշխարների, եկեղեցական մասունքների քանակը, նշում, թե որքան կամար, մուտք և խորան ունի այս կամ այն եկեղեցին։ Վերջապես նա հասնում է ս. Հակոբի գերեզմանին։ Արեղան նկարագրում է բազմաքանակ հոգևորականների, արեղանների (չորս հազար մարդ), չհաշված աշխարհականներին, կանանց, երեխաներին, որոնք եկել էին մասնակցելու տոնակատարությանը։ Տոնակատարությունը տևեց երեք օր։ Արեղան ապշել էր եկեղեցու վեհությունից ու գեղեցկությունից։ «Սուրբ Յակոբայ եկեղեցին Գ(3) տապաղայ է, ԲԾՁ (206) կամար է, (30) խորան է, Դ(4) դուռն է... մեծ դանակակալաուն մի ունի է(7) տապաղայ է; Բ(2) մեծ զանգակ կայ ի մէջն»²⁷։ Նրա վրա մեծ տպավորություն է թողել այցելությունը Մագրիդ, Ֆիլիպ թագավորի ամառանոցը էսկուրիալում։ Հետաքրքիր է նկարագրել Սևիլիան, այդ խոշոր նավահանգիստային քաղաքը, որի միջով էր անցնում ծովային կապը Նոր աշխարհի հետ։ Երկար ժամանակ Սևիլիան ոչ միայն ճանապարհորդների, այլև իրենց՝ իսպանացիների գիտակցության մեջ զուգորդվում էր նրա բանուկ նավահանգիստին՝ Ամերիկայից բերվող ճուխ գանձերի շնորհիվ։ Սարգիս արեղան պատմում է, ըստ երևույթին, Սևիլիայում լսած աներևակայելի պատմությունն այն մասին, թե ինչպես են Նոր Հնդկաստանում (այդպես է նա կոչում Ամերիկան) ոսկի և արծաթ հանում և ամեն տարի հինգ նավերով այնտեղից բերում Սևիլիա։ «Այտ այն ոսկին (և) արծաթին) է, որ ինքն իրեն կու բուսանի, զարմանք բան է»²⁸։ Արեղան, ամենևին չկասկածելով, վերապատմում է այն հեքիաթային պատմությունը, թե ինչպես «շատ ձի, շատ ջորի, կով, ոչխար կու մորթին, լաշն կու տանին այն տեղն, կու ձգին, որ ոսկին-արծաթն կու բուսանի. ան տեղն մեծ մոջիմ կու լինի, մեծութիւնն շան չափ. մոջիմներն կու ելին ոսկուն միջէն, լաշն ուտել կու երթան, Գ-ԴԾ (3-400) ձիաւոր կտրիճ կու երթան, ի մէջն կու մտնուն, վայր ու վեր կու վաղեցընեն, ոսկի-արծաթն կու մանտրի մինչև մոջիմն գայ. մոջիմը լաշն կուտէ ու դառն(այ) գայ իր տեղն. տես(ն) ու մա(ն)տրած է ոսկին ու արծաղն»²⁹։

Ինչպես իրավացիորեն նկատված է, «միջնադարյան ուղևորությունները օտար երկրներ ներքուստ կրել են իրենց մեջ պատմողականության և հետաքրքրականության տարրեր, քանզի ընդգրկել են տարբեր ժողովուրդների ավանդությունների և հրաշքների նկարագրություններ»³⁰։ Կենդանիների ղիերի՝ հրաշքով թանկարժեք մետաղների վերածվելը ներկայացնում է հեքիաթային-ֆանտաստիկ պատմողականության տարրեր, որոնք թափանցե-

25 Լ. Ս. Խաչիկյան, Սարգիս արեղայի ուղեգրությունը (Պատմա-բանասիրական հանդես, 1970, № 3, էջ 125—148)։

26 Նույն տեղում, էջ 141։

27 Նույն տեղում, էջ 142։

28 Նույն տեղում, էջ 143։

29 Նույն տեղում։

30 Ե. Լ. Րիֆտին, Типология и взаимосвязи средневековых литератур (Типология и взаимосвязи средневековых литератур Востока и Запада, М., 1974, с. 19)։

լով ուղեգրության մեջ, հաղորդում են նրան հետաքրքրականության մի նոր երանդ:

Սարգիս արեղայի ուղեգրության մեջ, որը Ամերիկայի հայտնագործությունը վկայող անդրանիկ հայերեն աղբյուրն է, առաջին անգամ հիշատակված է նաև «Անհաղթ Արմադայի» կործանումը 1588 թվականին:

XVII դ. սկզբին ճամփորդության է ելել Ավգուստինոս Բաշեցին: Պարսկաստանից ուղեկցելով մի ինչ-որ եվրոպացի դեսպանի, նա այցելում է Դերբենդ, Աստրախան, Մոսկովյան պետություն, Ղևհաստան, ապա՝ Գերմանիա, Իսպանիա և Իտալիա: Իր ուղեգրության մեջ նա հատկապես մանրամասն նկարագրում է Իտալիայի և Իսպանիայի եկեղեցիները: Մի զարմանալի բարյացակամություն և գեղագիտական նուրբ զգացողություն է բնորոշ Բաշեցուն: Իսպանիայում նա այցելում է «Մատրիլ քաղաքն, որ է թագաւորանիստ. ի ճանապարհն շատ բերդ, դեղ ու քաղաք տեսանք գեղեցիկ. լաւ քրիստոնեայք»³¹: Նա այցելում է նաև էսկուրիալ, «որ է խիստ զարմանալի շինած մէջն և ի դուսն. շենքն ամենայն մառմարիալ. ի մէջ եկեղեցին կայր բաղում աշտարակ և կանթեղք արծաթեղէն և ոսկեղէն... մեջն գրքատուն կայ... գրքով լի, զամենայն ոսկով կազմած և ամենայն ցեղ լեզուէ ի մէջն կայ»³²: Խոսելով Սալամանկայի մասին, նշում է, որ այստեղ էլ «բաղում դպրատուն կայ», որ «ամենայն ցեղ լեզու հոն կուսնեն»: Նա նկարագրում է Ե. Հակոբի տաճարի զարմանալի գեղեցկությունը: Իսպանիան նրան անսահման գեղագիտական հաճույք է պատճառել՝ նա տեսել է «խիստ զարմանալի, հիանալի և հրաշալի» տաճարներ, վանքեր, եկեղեցիներ, որոնց մասին «չէ կարելի պատմել ամենայն»: Մադրիդում նա հանդիպել է մի հայ էպիսկոպոսի, որը «խիստ լաւ ընկալաւ մեղս»³³, Այն ամենն, ինչ տեսել է Իսպանիայում նրա սրտով է եղել. «Լաւ աշխարհ և բարի քրիստոնեայք»: Այս բոլոր գրառումները, կարծում ենք, ինչ-որ չափով արտահայտում են նաև հեղինակի բնավորությունը, մի մարդ, որ օժտված է եղել գեղեցիկի զգացողությամբ, ձգտելով ամեն ինչի մեջ տեսնել գեղեցիկը:

XVII դ. միջազգային առևտրական կապերի աճին և ծավալմանը զուգընթաց հայ վաճառականները ավելի հաճախակի են հյուրընկալվում Իսպանիայում: Դ. Ալիշանը հիշատակում է նրանցից մի քանիսին: Մեզ է հասել Զաքարիա Ագուլեցու օրագրությունը. վերջինս եղել է վաճառական, ձեռներեց մարդ, որը երկար շրջագայել է բազում երկրներում և հակիրճ ու հստակ գրառումներ է կատարել իր առևտրական գործերի և անձնական կյանքի իրողությունների վերաբերյալ: Զաքարիան 1660 թ. եղել է Իսպանիայում: Նախով եկել է Կադիքս, այցելել ծովափնյա Մալիկա, Ալիկանտե, այնուհետև՝ Լիկորնո, Մեսինա, Զմյուռնիա³⁴: Շատ սակավախոս է Զաքարիան. իր գրառումներին մեջ նա ընդգրկում է սոսկ ամենաանհրաժեշտ տեղեկությունները. գործնական հանդիպումներ, Պիրենեյան թերակղզու հարավ-արևելյան ծովափնյա գոտու առանձնահատկությունների նկարագրություն և այլն:

XVII—XVIII դդ., ըստ երևույթին, նավահանգստային Կադիքս քաղաքում եղել է ոչ մեծ հայկական համայնք: «Ամենն խոսուն հետքը, որ երեք հարյուր տարի առաջ այստեղ ապրող մեր ազգակիցները ձգած են իրենց ետև՝ կը մնան հայկական արձանագրություններ կրող հախճապակյա քառակուսի սալիկները, որոնք կը ծածկեն քաղաքին հնագույն եկեղեցիներին Սանտա՝ Մարիայի գլխավոր մատուռին պատերը...»,—վկայում է Վ. Մավյանը³⁵:

³¹ Աւգուստինոսի Բաշեցույ ճանապարհորդութիւն յԵւրոպայ (Ք. Պատկանյան, Նըշ-Ֆսարք մատենագրութեան Հայոց, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 12):

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում:

³⁴ Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 55:

³⁵ Վ. Մավյան, Անկապ օրագիր, Երուսաղեմ, 1968, էջ 159:

Ջուդայեցի երեք եղբայրներ՝ Դավիթ, Հակոբ և Պողոս Շաքարճյան) Սանտա Մարիա, տաճարին նվիրել են Իտալիայում պատրաստված օրհնյալ ջրի մարմարյա ավազան՝ հայերեն լեզվով քանդակված հիշատակարանով։ Կագիբսում եղել է նույնիսկ «հայ կառավարիչ», որը հայտնի էր «Ժուան Կլաւթ հայ» անունով, նրա մյուս անունն էր Ֆրակելա։ Մինչև այժմ՝ եանգուն է 1756 թ. նրա կառուցած հանդստյան տուն-բուժարանը³⁶։

Իսպանիայում ճանապարհորդած հայ ուխտավորների ուղեգրություններում գծագրվում է այդ երկրի պատկերը։ Նրանց հիմնական նպատակն է եղել տեսնել ս. Հակոբի գերեզմանը, ուստի և նրանք տոկացել են այդ ուղեվորության բոլոր դժվարություններին։ Նրանք նկարագրել են տաճարները, դրանց հարդարանքը, եկեղեցական ծեսերը, տոնական երթերը, բայց և ուշադրությունից դուրս չեն թողել երկրի առօրյա կյանքը։ Հայ ճանապարհորդներին դարձացրել են խոշոր քաղաքները, ուստի և նրանք հաճախ հաղորդել են վկայություններ դրանց բնակիչների քանակի մասին։ «Աշխարհի ծալրը»՝ Իսպանիա հասնելը յայնացնում էր միջնադարյան հայ մարդու աշխարհճանաչողության սահմանները, հաղորդակից դարձնում նրան համաշխարհային իրադարձություններին։

Նմանօրինակ յուրաքանչյուր ճանապարհորդություն աշխարհի վրա բացվող մի պատուհան էր թե՛ սրբավայրեր մեկնող ուխտավորի և թե՛ դործարար մարդու, վաճառականի համար, որն արդեն ոչ թե տաճարներ է նկարագրում, այլ հաղորդում է նավերի երթուղիները և մանրամասնորեն ներկայացնում Իսպանիայի ծովեզերքը՝ հեշտացնելու համար ուրիշ նավերի ուղևորությունը հեռավոր երկրներ։

Իր հերթին Հայաստանն էլ գրավել է իսպանացի միսիոներների և դիվանագետների ուշադրությունը։

Հայաստանի մասին բազում արժեքավոր տվյալներ ենք դտնում Ռույ Գոնզալես դե Կլավիխոյի ճամփորդական նոթերում։ Վերջինս գլխավորել է Իսպանիայի թագավոր Հենրիխ III-ի կողմից Լենկ Թեմուրի մոտ ուղարկված պատգամավորությունը։ 1403 թ. այդ պատգամավորությունը դուրս դալով Կադիքսից՝ 15 ամսում հասնում է Սամարղանդ։ Սղաժ փաստերի համաձայն, այդ ժամանակ Լենկ Թեմուրը գտնվել է Ղարաբաղում, ուստի և իսպանացիները գալիս են Տրապիզոն և Հայաստանի միջով անցնում են մինչև Խոյ։ Ճանապարհին, բոլոր դադարների ժամանակ, նրանց սպասարկել են տեղի շինականները։ Կլավիխոն նշել է թաթարների վայրագ վերաբերմունքը տեղացիների նկատմամբ։ Նա նկարագրել է Տրապիզոնը, Երզնկան, Սուրմալուն, Իգդիրը, Խոյը, որոնք ժամանակի կարևոր առևտրական կենտրոններն էին։

Նկարագրելով հայոց եկեղեցու պատարաղը, Կլավիխոն նշում է նրա նմանությունը կաթոլիկականին։ Նա գոհունակությամբ նկատում է. թե «...այս հայերը շատ բարեպաշտ մարդիկ են և մեծ ջերմեռանդությամբ լսում են պատարագը»³⁷։

Կլավիխոն հանգամանորեն պատմում է իր ճամփորդության մասին, տեղեկացնելով, որ Երզնկան (Արզինջան) կառուցել են հայերը, և քաղաքի այդպիսինում կարելի է տեսնել քարերի վրա քանդակված խաչեր (խաչքարեր)։ Քաղաքը խիտ բնակչություն ունի և շատ փողոցներ ու հրապարակներ։ Այստեղ հիմնականում բնակվում են հարուստներ և խոշոր առևտրականներ։ Բնակիչների մեծ մասը հույներ են և հայեր։ Նրանք բոլորը քրիստոնյա են։ Էրզրումը, ինչպես նկատել է Կլավիխոն, այդ կողմերի ամենամեծ և ամենահարուստ քաղաքն է, որն առաջ պատկանում էր հայոց թագավորին։ Քաղաքի հիմնական բնակիչները հայեր են։

Կլավիխոն ձգտել է ներկայացնել այն ամենի սպառիչ պատկերը, ինչ տեսել է, ինչի մասին նրան հաղորդել են, քանզի շատ բան (գրեթե ամեն

³⁶ Նույն տեղում, էջ 161։

³⁷ Ուղեգրություն Ռույ Գոնզալես Կլավիխոյի (Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, Դ. Ա. Երևան, 1932, էջ 106)։

ինչ) նա իմացել է անմիջապես ճանապարհին: Արարատի ստորոտին է Սուրմալուն, որն ըստ ավանդության կառուցել են նույի որդիները, Այն ավերելու հիմնահատակ կործանել է Թոխթամիշ խանը: Իսպանացի պատգամավորի շուրջը սփռվել էին ամայացման ու կործանման հետքեր, ավերակ վայրեր: Կլավիխոն այցելում է Մակու ամրոցը, որտեղ գտնվում էր Դոմինիկյանների վանքը: Այստեղ նրան պատմում են ամրոցի իշխանի որդու ճակատագրի մասին, որին կենկ Թեմուրը բռնությամբ պահել է իր մոտ, ստիպելով ընդունել մահմեդականություն:

«Հիրավի, զարմանալի է, թե ինչպե՞ս Մակվի այս քրիստոնյաները կարող են պահել իրենց, շրջապատված մահմեդական ժողովրդով և այսքան կտրված բոլոր քրիստոնյաների օգնությունից»,—եզրակացնում է Կլավիխոն, հեռանալով Մակվից³⁸:

Կլավիխոյի հուշերը ժամանակակցի մեծարժեք վկայություններ են, որոնք չափազանց կարևոր ու հետաքրքիր են XV դ. սկզբի հայ ժողովրդի պատմության համար:

XIV—XV դդ. են վերաբերում այն վավերագրերը, որոնք լույս են սփռում հայ-իսպանական փոխհարաբերությունների մեկ այլ կողմի վրա: Մ. Ալեքսեևը, վկայակոչելով իսպանացի ճանապարհորդ Պերո Տաֆուրին, բերում է վերջինիս հաղորդած տեղեկությունները Ղրիմի թաթարների քրիստոնյա գերիների մասին, որոնց տեսել է XV դ. 30-ական թվականներին Կաֆայի (Թեոդոսիա) ստրկաշուկայում, որտեղ ռուսների հետ միասին իրենց դժնի ճակատագրին էին սպասում նաև հայեր, մեզրելներ և շերքեզներ³⁹:

Անցյալ դարի վերջին բավական հետաքրքիր նյութեր է ժողովել Մաքսիմ Կովալևսկին, որը հետադուր է խերոնի, Բարսեղունի, Պալմայի և Վալենսիայի արխիվները, որ գրեթե ուսումնասիրված չեն եղել⁴⁰:

Կովալևսկին արձանագրել է Իբերիական թերակղզու արևելյան ափերին ուղղափառ ստրուկների գոյության փաստը: Նա բերել է Արագոնի թագավոր Մարտինի հրամանը (1401 թ.), որի մեջ թվարկված են բոլոր այն ազգությունները, որոնց պատկանում են այդ ստրուկները. «հույներ, ապա հայեր, ալբանացիներ, ռուսներ, բուլղարներ»⁴¹: Մարտին թագավորը բոլորին խոստանում է ազատության իրավունք տալ միայն այն պայմանով, եթե նրանց տները որպես փրկագին վճարեն նախնական մի գումար: Այդ հարցը, սակայն, երկար ժամանակ մնում է չուժված: Գրեթե երեք հարյուրամյակ անց, 1690 թ. Իսպանիայի թագավորին է ներկայանում Նդիա Բեթլեհհեմցին՝ Նրուսադեմի հայոց պատրիարքարանի նվիրակը, խնդրելով, որ «հայ նավաստիներին գերի չվերցնեն և չստրկացնեն, այլ ազատ արձակեն, որպես քրիստոնյա և բարեկամ ժողովրդի զավակներ»⁴²:

XVII դ. է վերաբերում Արևմտյան Նվրոպայի և Արևելքի միջև առևտրական հարաբերությունների ծավալումը: Իսպանացիների՝ վաճառահանման նորանոր շուկաներ ձեռք բերելու պայքարի մեջ կարևոր դեր ունեին Պարսկաստանն ու Հնդկաստանը: Այս կապակցությամբ պետք է նշել, որ եվրոպական կապիտալի ներդրումը մեծ չափերի էր հասնում հատկապես Կովկասում և Անդրկովկասում, որոնք Արևելքում կաթոլիկական պրոպագանդի գլխավոր հենակետերն էին:

³⁸ Նույն տեղում, էջ 116:

³⁹ М. П. Алексеев, Очерки истории испано-русских литературных отношений XVI—XIX вв., Л., 1964, с. 5.

⁴⁰ Максим Ковалевский, О русских и других православных рабах в Испании (Юридический вестник, т. XXI, кн. 2, 1886, с. 233).

⁴¹ Նույն տեղում, էջ 248:

⁴² Ա. Գ. Արամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1967, հ. 2, էջ 205:

XVII դ. սկզբին պարսկահայերի մեջ հատկապես լայն գործունեություն ծավալեցին Ավգուստինյան և Դոմինիկյան միաբանությունների իսպանացի և պորտուգալացի միսիոներները. ընդ որում «Շահ-Աբբասի հետ իսպանական արքունիքի բանակցությունների կարևորագույն հարցերից մեկը իսպանացի և պորտուգալացի միսիոներներին հովանավորելու պահանջն էր, ինչպես նաև նրանց շնորհելու քրիստոնյա բնակչության, հատկապես հայերի մեջ ազատորեն գործելու հնարավորություններ»⁴³:

Հայերի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իսպանացի Անտոնիո դե Գուվեան, որը եղել է Պարսկաստանում, իսպանական դեսպանության կազմում, պարսկա-թուրքական պատերազմի ժամանակ: Նրա հուշերն ընդգրկում են 1602—1608 թվականները:

Գուվեան մեծ համակրանքով ու ցավով է գրում թուրք-իրանական սա-սերաղմների ընթացքում հայ ժողովրդի կրած անլուր տառապանքների մասին: Երկասիրությունը բերորդ գիրքը, որ վերնագրված է «Հայերի ստրկացման» ու նրանց բռնազաղթի մասին», «սրտաճմլիկ տողերով մանրամասն նկարագրված է հայերի բռնազաղթի դժնդակ պատկերը»⁴⁴: Նույն այս շրջանը լուսաբանվել է նաև Պելլիոր դու Անտոսի «Տեղեկություններ քրիստոնեության վիճակի մասին Պարսկաստանում և Հայաստանում» երկի մեջ: Հեղինակը իսպանական դեսպանության կազմում 1604—1605 թթ. ճանապարհորդել է Պարսկաստանում: Որպես իսկական միսիոներ, հայր Պելլիորը մեծ տեղ է հատկացնում հայոց տաճարների, քրիստոնյա հայերի վիճակի նկարագրությանը, նշում նրանց աստվածասիրությունը, անկաշառությունը, նվիրվածությունը քրիստոնեական եկեղեցու պատվիրաններին: Պելլիոր դու Անտոսը հայերի նկատմամբ Շահ-Աբբաս I-ի դաժան հաշվհարդարի վկան է: Իր նոթերում նա պատմում է հայերի զանգվածային գերեվարության, Թավրիզի, Զուղայի, Նախիջևանի, Երևանի, Վանի հրկիզման ու կոտորածի և այն սարսափելի տանջանքների մասին, որ կրել է այդ քաղաքների հայ բնակչությունը. «Այս մարդոց տառապանքը այնքան մեծ էր, որ շատերը լամպան մեռան, առանց որ հայրը կարենա օգնության հասնիլ իր զավակին, ինչպես զավակը իր հորը»⁴⁵:

Այս ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանի և հայերի թեման իր արտացոլումն է գտել նաև միջնադարյան իսպանական գրականության մեջ, այնպիսի գրողների երկերում, ինչպիսիք են Լոպե դե Վեգան, Սերվանտեսը, Կալդերոնը, Գրասիանը և ուրիշներ:

Ընդհանուր գծերով այսպիսին են V—XVII դդ. հայ-իսպանական պատմական և մշակութային առնչությունները: Ինչպես երևում է վերն առվածից, դրանք անցել են փոխադարձ մերձեցման ու շփումների երկարատև պատմական ուղի:

ИЗ ИСТОРИИ АРМЯНО-ИСПАНСКИХ КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКИХ СВЯЗЕЙ V—XVII ВВ.

А. Г. АРАМЯН

Р е з ю м е

Испания и испанцы были известны армянам с древнейших времен: они упоминаются в «Истории Армении» М. Хореаци (V в.), в: «Географии» А. Ширакаци (VII в.).

Особенно крепнут армяно-испанские экономические, религиозные и культурные связи в период существования Киликийского армянско-

⁴³ В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке, Ереван, 1969, с. 126—127.

⁴⁴ Մ. Կ. Զ ու լ ա լ յ ա ն, Եվրոպացի հեղինակները Հայաստանի և հայերի մասին XVI—XVII դդ. (Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 3, էջ 23):

⁴⁵ Ռ. Վ. Կ յ ու լ Վ ե ն կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 162:

го царства. Тесно переплетена с Испанией судьба последнего царя Киликийской Армении Левона VI Лузиняна.

В средние века Испания привлекала внимание армянских паломников из-за монастыря св. Иакова (Акопа) в Сантьяго-де-Компостела в Галисии. Путевые записи Мартироса Ерзнкаци (XV в.), архимандрита Ованеса (XVI в.), инока Саркиса (XVI в.), Августина Баджеци (XVII в.) содержат много интересных сведений об Испании. Армения также привлекала внимание испанцев—дипломатов и миссионеров. Чрезвычайно ценны сведения об Армении, о дружественном христианском народе в «Мемуарах» Клавиho (XV в.), в «Донесениях» Пельшиора дос Анжоса (XVII в.) и др.

FROM THE HISTORY OF ARMENIAN-SPANISH CULTURAL-HISTORICAL CONNECTIONS IN V—XVII CC.

A. G. ARAMIAN

S u m m a r y

Spain and Spaniards were well known to Armenians from ancient times: they are mentioned in "The history of Armenia" by M. Khorenatsi (Vc.), in "Geography" by A. Shirakatsi (VIIc.).

Armenian-Spanish economic, religious and cultural connections were especially stronger in the period of the existence of Cilician Armenian Kingdom. The destiny of the last king of Cilician Armenia Levon the VI Lusinian was tightly interlaced with Spain.

In the Middle Ages Spain attracted Armenian pilgrims' attention with St. Jakob's cloister (Hakob) in Santiago-de-Kompostela in Galicia. Martiros Erznkatsi's (XVc.), archimandrite Hovhannes' (XVIc.), monk Sarkis' (XVIc.), Avgustions Bazhentsi's (XVIIc.) itineraries involve a lot of interesting informations on Spain.

Armenia also attracted Spaniards—diplomats' and missionaries' attention. Informations about Armenia, about friendly Christian people in Klavikho's "Memoirs" (XVc.), Pelshiora dos Anzhos' "Reports" (XVIIc.), etc. are extremely valuable.